

3. Հասույթ

Մշակաբույսերի արտադրության հասույթը ներառում է տնտեսության սահմանային գները, ինչպես նաև առկայության դեպքում՝ ուղղակի վճարումները:

Ոչ շուկայական արտադրանքը սովորաբար չափվում է ֆիզիկական միավորներով և չի հաշվարկվում: Եթե հասույթը վերաբերում է վաճառվող անասնակերին, ապա այստեղ չափվում են սննդատարրերի հասույթը (տես կերարտադրություն բաժինը):

Խորհուրդ է տրվում, որ հաշվարկները պլանավորելու համար հասույթը ներառի այն, ինչը հետագայում կարող է իրատեսորեն հասանելի և պահպանելի լինել: Այս հասույթը հիմնականում հաշվարկվում է վերջին տարիների միջին արտադրանքի հիման վրա:

3.1 Հիմնական հասույթ

Որոշ մշակաբույսերի որակական տարբերություններն ազդում են դրանց օգտագործման և արտադրանքի գնի վրա: Օրինակ պարենային և կերի ցորենները, կամ սեղանի և տեխնիկական կարտոֆիլը հաշվարկվում են առանձին-առանձին:

Նույն հաշվարկի մեջ հասույթը բաղկացած է արտադրված պարենային և կերի ցորենի արժեքներից (60g/հա-ի 80% և 20% համապատասխանաբար), ինչպես նաև ուղիղ վճարումներից: Ծղոտի մեջ պարունակվող սննդատարրերի արժեքը, որոնք հեռացված չեն, հաշվարկվում է և օգտագործվում է հաջորդ բերքի համար նախատեսված սննդատարրերի ապահովման համար:

3.2 Հավելյալ (կողմնակի) արտադրանքից հասույթ

Հավելյալ արտադրանքը հաճախ վաճառքի ենթակա չի շուկայում, բայց կան դրանց օգտագործման բազմաթիվ այլընտրանքներ, և այդ պատճառով դրանք պետք է ներառվեն հաշվարկում: Սա կարող ենք ցույց տալ ծղոտի օրինակով, որը համարվում է ցորենի կողմնակի արտադրանք:

- **Ծղոտը որպես շուկայական կողմնակի արտադրանք**
Գնահատվում է վաճառքի գնով (տնտեսության սահմանային գին)
- **Ծղոտը որպես ոչ շուկայական կողմնակի արտադրանք**
- **Ծղոտը որպես գոմափռոց**
 1. Չափումը ծղոտի հաշվարկման համար կատարվում է ֆիզիկական միավորներով (քանակապես), ցանկացած թերության և ավելցուկի դեպքում վաճառվում է ինչպես շուկայական գնով, այնպես էլ՝ հերկվում կամ կերակրվում է:
 2. Գնահատվում է ներքին գնահատման գներով:
- **Ծղոտը որպես անասնակեր**
 1. Չափումը անասնակերի պահանջի ներդրման համար կատարվում է ֆիզիկական միավորներով (սննդատարրերի քանակով), ցանկացած թերության և ավելցուկի դեպքում վաճառվում է ինչպես շուկայական գնով, այնպես էլ՝ հերկվում կամ կերակրվում է:
 2. Գնահատվում է ներքին գնահատման գներով:
- **Ծղոտը որպես բույսերի համար սնունդ**
 1. Չափումը ֆիզիկական միավորներով (սննդատարրերի քանակով)՝ ամբողջ բույսի կողմից սննդանյութերի հեռացման հետ միասին՝ սննդանյութ սննդանյութերի հավասարակշռված պահանջի հաշվարկը):
 2. Գնահատվում է ներքին գնահատման գներով:

Նույն կանոնը կիրառելի է նաև այլ մշակաբույսերի կողմնակի արտադրանքների դեպքում (օր. շաքարի ճակնդեղի փրերը և այլն): Ծահույթի հաշվարկի համար ընդհանուր առմամբ խորհուրդ է տրվում առաջին հերթին կողմնակի արտադրանքը համարել չհավաքված և ծղոտի պահեստավորման համար կատարել առանձին հաշվարկ: Սա հեշտացնում է ծախսերի բաշխումը և մեծացնում ֆերմերային պլանավորման ճկունությունը: